

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Հայտատուի հետ

/Կինոկարների նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կանոնակարգի շրջանակներում/

ք. Երևան

« » 2021թ.

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կինոկենտրոն), ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Շուշանիկ Ժիրայրի Միրզախանյանի, որը գործում է Կինոկենտրոնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և « » -ն (այսուհետ՝ Կինոարտադրող), ի դեմս տնօրենի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում միասին անվանվելով «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», հիմք ընդունելով **Կինոկարների նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կանոնակարգի** (այսուհետ՝ «Կանոնակարգ») 31-րդ կետի պահանջները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր»), հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Կանոնակարգի շրջանակներում հանձնաժողովի կողմից ընտրված « » պայմանական վերնագրով խաղարկային դեբյուտային լիամետրաժ նախագծի Կինոարտադրողը..... (.....) ամսվա ընթացքում Ֆիլմի արտադրական փուլի բյուջեն համալրելու դեպքում վերջինիս կտրամադրվի /...../ ՀՀ դրամ:
- 1.2 Ֆիլմի արտադրական փուլը մեկնարկելու հնարավորություն Կինոարտադրողը կարող է ձեռք բերել միայն նախագծի բյուջեն համալրելու դեպքում՝ Կինոկենտրոնին ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

2. ՖԻԼՄԻ ՊԱՐԱՄԵՏՐՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

- 2.1 Նախագծի պարամետրները հետևյալն են՝
 - Ֆիլմը ստեղծվելու է
 - Ֆիլմի Բեմադրող Ռեժիսոր՝
 - Ֆիլմի Պրոդյուսեր՝
 - Ֆիլմի աշխատանքային անվանում՝ «.....»,
 - Ֆիլմի տեսակ՝
 - Ֆիլմի ժանրը՝
 - Ֆորմատ՝
 - Գույն՝
 - Ֆոնոգրամա՝
 - Օրիգինալ լեզուն՝ հայրեն
 - Տևողություն՝
- 2.2 Ֆիլմի արտադրական փուլի ընդհանուր բյուջեն կազմում է(.....) ՀՀ դրամ, որից՝
 - 2.2.1 Կինոարտադրողի կողմից Համաձայնագրի 1.1 կետում ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում (այսինքն՝ Ֆիլմի արտադրական փուլի բյուջեն համալրելու դեպքում), Կինոկենտրոնը կտրամադրի (.....) ՀՀ դրամ, իսկ Կինոարտադրողը կներդնի (.....) ՀՀ դրամ, որի վերաբերյալ Կողմերը կկնքեն առանձին ֆիլմի արտադրության վերաբերյալ պայմանագիր, որը կհաղիսանա Համաձայնագրի անբաժանելի մասը:
- 2.3 Պայմանագրի 2.2 կետում նշված ընդհանուր բյուջեի փոփոխման դեպքում՝ Կինոարտադրողը պարտավորվում է առնվազն --- օր առաջ գրավոր ծանուցել Կինոկենտրոնին, որպեսզի վերջինս էլ իր հերթին տեղյակ պահի լիազոր մարմնին: Հակառակ դեպքում առաջացած բոլոր ռիսկերը կրելու է Կինոարտադրողը:

- 2.4 Համաձայնագրի կնքման օրվանից մինչև վերջինիս ժամկետի ավարտը, Կինոարտադրողը պարտավորվում է ամիսը մեկ ներկայացնել Կինոկենտրոնին Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ գրավոր հաշվետվություն:
- 2.5 Ֆիլմի արտադրական փուլի ընդհանուր բյուջեի ավելացման դեպքում Կինոկենտրոնի կողմից Համաձայնագրի 2.2.1 կետով նախատեսված ներդրման չափը մնում է անփոփոխ:

3. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 3.1 Սույնով Կինոարտադրողը երաշխավորում է, որ պարտավորվում է զերծ պահել Կինոկենտրոնին ցանկացած երրորդ անձանց կողմից Կինոկենտրոնին պահանջներ և ոտնձգություններ ներկայացնելու դեպքերից, որոնք կապված են Ֆիլմի Սցենարի հեղինակային իրավունքների հետ և պարտավորվում է կարգավորել բոլոր նմանատիպ խնդիրները և տարաձայնությունները՝ լուծելով դրանք իր հաշվին և իր միջոցներով:
- 3.2 Սույնով Կինոարտադրողն անվերապահորեն ընդունում է և չի առարկում, որ միայն իր կողմից Համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունները կատարելու պարագայում, Կինոկենտրոնը կտրամադրի (կաջակցի, կներդնի) Համաձայնագրով նախատեսված գումարը:
- 3.3 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է (.....) ամիս ժամկետով, մինչևթ.-ը:
- 3.4 Համաձայնագրում փոփոխություններ կարող են տեղի ունենալ միայն Կողմերի համաձայնության դեպքում, որոնք կատարվում են գրավոր կերպով և ստորագրվում են երկու Կողմերի կողմից և հանդիսանալու են Համաձայնագրի անբաժանելի մասը:
- 3.5 Համաձայնագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.6 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:
- 3.7 Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
 Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 3ա,
 Փաստացի գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացի փող., շենք 83, բն. 4
 Գրանցման համար՝ 271.210.02511
 ՀՎՀՀ՝ 01203271
 Բանկային վավերապայմաններ՝
 ՀՀ Ֆինանսների նախարարություն
 (Գանձապետական բաժանմունք)
 900018001744 (2950) AMD
 Հեռ.՝ (+37410) 35-78-78
 Էլ.Փոստի հասցե՝ kinokentron@gmail.com
 Ինտերնետային կայք՝ www.ncca.am

ԿԻՆՈԱՐՏԱԴՐՈՂ

«.....»
 Իրավաբանական հասցե՝
 Գրանցման համար՝
 Պետական գրանցման վկայական՝
 ՀՎՀՀ՝
 Բանկային վավերապայմաններ՝
 «.....» ...
 Հ/հ՝
 Հեռ.՝
 Էլ. Փոստի հասցե՝
 Տնօրեն՝ _____ Կ.Տ.

Տնօրենի ժ/պ՝ _____ Շ.Միրզախանյան
 Կ.Տ.